С.Э. ЕГИАЗАРЯН

ВСТАВНЫЕ И ДОБАВОЧНЫЕ СТРУКТУРЫ В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

Обсуждаются вставные и добавочные структуры в прозе Абига Авагяна, которые выражают дополнительную информацию, толкование, связанное с содержанием основного предложения или какого-либо члена предложения. Последние имеют интерпозитивное и постпозитивное применение и выражают отношение автора или героев к имеющим место явлениям.

Ключевые слова: вставное предложение, добавочное сочетание, соединительные, противительные и добавочные союзы, сложносочинённое предложение, дополнительная информация.

S.E. YEGHIAZARYAN

PARENTHETIC AND ADDITIVE STRUCTURES IN ABIG AVAGYAN'S PROSE

The parenthetic and additive structures in Abig Avagyan's prose which express extra information, interpretation, illustration connected with the content of the main sentence or any of its parts are considered. These structures have mid and post position and expresses the author's or the characters' attitudes towards any phenomenon taking place.

Keywords: parenthetic sentence, additive phrase, cumulative or copulative, adversative and additive conjunctions, compound sentence, extra information.

ՀՏԴ 81-13:811.111

Հ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

«ԿՎԱԴՐՈ» ՄԵԹՈԴԻ ԽՄԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

(Վանաձոր)

Փոխներգործուն մեթոդի նպատակն է զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները, համակարգել և ընդհանրացնել ուսուցանվող առարկայից նրանց գիտելիքները: «Կվադրո» մեթոդի հիմքում ընկած է անցած թեմայի վերլուծություն՝ քննարկման միջոցով, որն օգնում է վերջնականապես ամրապնդել անցած նյութը:

Առանցքային բառեր. փոխներգործուն մեթոդ, քննարկվող թեմայի սահմանում, կարծիքի բացահայտում, հաղորդակցման նպատակ, անցած նյութի ամրապնդում:

«Կվադրո» մեթոդը կարծիքի բացահայտման և թիմային քննարկման մեթոդ է, որը պետք է ունենա հետադարձ կապ:

Շատ քննարկումներ դառնում են ոչ կառուցողական այն պատճառով, որ մասնակիցները հենցսկզբից չեն սահմանում իրենց տեսակետը քննարկվող հարցի շուրջ:

Ցանկացած քննարկման ժամանակ դասախոսն ունի միջնորդի դեր և իրականացնում է հետևյալ ֆունկցիաները.

- ձևակերպել խնդիրը և քննարկման թեման,
- ստեղծել անհրաժեշտ մոտիվացիա,
- ցույց տալ խնդրի կարևորությունը,
- բացահայտել խնդրում չլուծված և հակասող պահերը,
- սահմանել սպասվող արդյունքը [1]:

Դասախոսը պետք է ստեղծի ընկերական միջավայր (ամենից լավ քննարկումն անցկացվում է ընկերական միջավայրում՝ ազատ սահմանափակումներից): Կարևոր է ստեղծել ուսանողների տեսողական շփումը միմյանց հետ և մասնակիցների թիվը լինի նվազագույնը: Շատ դժվար է պահպանել ոչ կարգավորումը, երբ 40 մարդ երեք շարքով նստած է լսարանում սեղանների շուրջ:

Քննարկման կանոնակարգը ձևավորելու համար բոլորը պետք է ելույթ ունենան, ուշադիր լսեն զեկուցողին, չընդհատեն, ունենան սեփական կարծիք, չկրկնվեն, չգնահատեն զեկուցողին՝ մինչև վերջ չլսելու և նրա տեսակետը չհասկանալու դեպքում, որպեսզի լինի միանշանակ փոխըմբռնում, ձևակերպվի քննարկվող թեմայի սահմանումը:

Արդյունավետ քննարկումը կառավարելու համար անհրաժեշտ է պահպանել բոլոր մասնակիցների ակտիվության բարձր մակարդակը, կարգուկանոնը, թեմայից շեղվողներին կանգնեցնել և ներգրավել պասսիվ մասնակիցներին, ամրակայել առաջարկված գաղափարները շարժական գրատախտակի կամ պլակատի վրա, որպեսզի բացառվեն կրկնությունները և խթան հանդիսանան լրացուցիչ հարցերին:

Ուսանողների ներկայացված գաղափարների, կարծիքների, դիրքորոշումների վերլուծությունը օպերատիվ ձևով անցկացնելու համար պետք է կատարել միջանկյալ եզրակացություն, ուղղորդել քննարկումը անհրաժեշտ ուղղություններով:

Քննարկման վերջում դասախոսն ամփոփում է ներկայացված խմբային առաջարկը և եզրափակում բոլոր ներկայացված կարծիքները: Այնուհետև համեմատում է ստացված արդյունքը սկզբնական աղբյուրի հետ և գնահատում. թե որքանով է որոշումը հանդիսանում խմբային: Եթե ընդհանուր որոշումը կայացված չէ, և խնդիրը չլուծված՝ ուղղորդում է, որ կայանան հաջորդ քննարկման ժամանակ: Դասախոսն ընդունում է խմբային որոշումը մասնակիցների հետ միասին, ընդգծում է յուրաքանչյուր մասնակցի ներդրումը և շնորհակալ լինում բոլորից [2]:

Ստորև ներկայացվում է դասախոսի և ուսանողի համատեղ աշխատանքի նախապատրաստման շրջանակը (նկ.)

Դասախոս Խումբ



Նկ. Դասախոսի և խմբային աշխատանքի նախապատրաստման շրջանակները

Բոլոր մասնակիցները միաժամանակ ցույց են տալիս քարտի թիվը, որն արտացոլում է իրենց կարծիքը թեմայի վերաբերյալ.

1) Համաձայն եմ: 3) Համաձայն չեմ, բայց...

2) Համաձայն եմ, բայց.... 4) Համաձայն չեմ:

Դասախոսը հաղորդում է ներկայացված կարծիքները:

Եթե թվերը նշանակալիորեն տարբերվում են, ապա անհրաժեշտ է քննարկում: Սկզբից արտահայտում են իրենց փաստարկներն այն մասնակիցները, որոնք համաձայն են առաջադրված խնդրին (ցույց են տվել թիվ 1-ը), նրանց լրացնում են այն մասնակիցները, որոնք ցույց տվեցին 2 թիվը և այդպես շարունակ:

Տարբերակները: Մասնակիցների մեծ քանակի դեպքում թեմաների ուսումնասիրությունն անցկացվում է միաժամանակ 5-6 հոգանոց խմբերով: Քարտում ներկայացվում է խմբի բոլոր անդամների կարծիքները, և վիճելի հարցերը դուրս է հանվում ընդհանուր վիճաբանության:

Մասնակիցները ստանում են քննարկման թեմաները՝ թղթի վրա տպագրված (մինչև 15 թեմա): Սկզբում աշխատանքն իրականացվում է անհատական ձևով: Հետո բոլորը նստում են կլոր սեղանի շուրջ և կարդում ընտրված թեման: Քննարկումը սկսվում է բոլոր մասնակիցների կարծիքների դիրքորոշումն արտահայտելուց հետո և բոլորը բարձրացնում են իրենց քարտերը՝ ներկայացնելով իրենց կարծիքը՝ առաջին հարցով ձախ հարևանին, երկրորդով՝ աջ հարևանին: Այդպես կատարվում է մտքերի փոխանակում՝ տարբերվող կամ նույնանման կարծիքներով:

«Կվադրո»-ի տարբերակը ներկայացվում է «Լուսացույց» տեխնիկայով:

Յուրաքանչյուր մասնակից ստանում է քարտ: Դասախոսը կարծիքները ներկայացնում է մեկ-մեկ: Մասնակիցները, ովքեր համաձայն են կարծիքի հետ, բարձրացնում են կանաչ քարտը, չհամաձայնվողները՝ կարմիրը, կասկածողները և ձեռնպահները՝ դեղինը:

Այս մեթոդի իրագործումը հնարավորություն է տալիս իմանալ բոլոր մասնակիցների կարծիքը: Ոչ ոք չի մնում միայն որպես հանդիսատես:

Շատ մասնակիցների մեջ արդեն իսկ խաղի սկզբում առաջանում է վառ հետաքրքրություն՝ պատճառներն իմանալու ցանկությամբ: Ուսանողները պետք է հիմնավորեն սեփական կարծիքը և հայացքների անհամապատասխանությունը:

Ցանկալի է պատրաստել այնպիսի թեմաներ, որոնց վերբերյալ խմբի մասնակիցները չունեն միանման կարծիք: Եթե ինչ-որ հարցի շուրջ մասնակիցների կարծիքը համընկնում է, ապա հետաքրքրությունը խաղի նկատմամբ կորչում է:

Ամեն անգամ մասնակիցներին անհրաժեշտ է հատկացնել մի քանի րոպե՝ առաջադրված խնդրի լուծման մասին մտածելու համար: Եթե թեման պահանջում է քննարկում, ապա մասնակիցներին խնդրում են հիմնավորել իրենց դրական և բացասական տեսակետները: Եթե քննարկումը մարում է, ապա հարկավոր է անցնել հաջորդ թեմային:

Այս մեթոդը չի կիրառվում, եթե հատկացված ժամանակահատվածում հնարավոր չէ անցկացնել քննարկումը: Անիմաստ քարտերի բարձրացումը քիչ արդյունավետ է:

Անգլերենի դասերին վերլուծության օբյեկտ են հանդիսացել ձեռնարկատիրական գործունեության 3 ձևերը, որոնք մանրամասնորեն ներկայացված են աղ. 1-ում [3]:

Table 1

Forms of entrepreneurial activity

PRIVATE ENTREPRENEUR	COMPANIONSHIP	COMPANY
It is the simplest form of entrepreneurial activity. Private entrepreneurship is the owner and can accomplish activity with employees or without employees.	It is the second of complexity degree. In this case owners of entrepreneurial activity are several persons (friends).	It is the third form of entrepreneurial activity. That is formed through participation of many persons, everybody of which invests its share for accomplishment of economic activity.

Վերլուծությունը կատարվել է «Կվադրո» մեթոդի կիրառմամբ և նպատակ ունի զարգացնելու ուսանողների՝ քննարկմանը մասնակցության մոտիվացիան: Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աղ. 2-ում [4].

Table 2

1. Agree, because	2. Agree, but
Private entrepreneur ➢ Mandatory registration of an accountant isn't defined by the law ➢ Statements are confidential, as well as not required a balance sheet **Companionship** ➢ Entrepreneurial risks are distributed between more than one person ➢ Several participants may invest more capital into setting up partnership or for its expanding **Company** ➢ Duties of shareholders are limited with invested capital by them. ➢ Profit and loss are distributed among the participants. ➢ Tax privileges are possible. ➢ Attract financial resources and talented specialists due to high salaries.	**Private entrepreneur** ➢ Private entrepreneur do investment alone **Companionship** ➢ It is possible to arise disputes between participants around the different problems **Company** ➢ It is required to issue stocks and to appoint the director for the foundation. ➢ Financial statements must be published.
3. Disagree, but	**4. Disagree, because**
Private entrepreneur ➢ Registration of a private entrepreneur is quite easy **Companionship** ➢ The foundation is easier and isn't required to issue stocks. ➢ The liquidation is easier too. **Company** ➢ The company's property can be distributed much easier among the members than in other organizational forms.	**Private entrepreneur** ➢ Private entrepreneur is responsible for its duties with its all property owned by him ➢ Entrepreneurial risks aren't distributed **Companionship** ➢ In many cases, the participant has a separate and cohesive duty for his friends. ➢ Companionship fails when one of the partners loses his interest or disagrees ➢ with the other. **Company** ➢ It is required to issue stocks and appoint the director for the foundation.

Table 2 (continuation)

3. Disagree, but	4. Disagree, because
Private entrepreneur ➢ Registration of a private entrepreneur is quite easy **Companionship** ➢ The foundation is easier and isn't required to issue stocks. ➢ The liquidation is easier too. **Company** ➢ The company's property can be distributed much easier among the members than in other organizational forms.	**Private entrepreneur** ➢ Private entrepreneur is responsible for its duties with its all property owned by him ➢ Entrepreneurial risks aren't distributed **Companionship** ➢ In many cases, the participant has a separate and cohesive duty for his friends. ➢ Companionship fails when one of the partners loses his interest or disagrees ➢ with the other. **Company** ➢ It is required to issue stocks and appoint the director for the foundation.

Եզրակացություն: «Կվադրո» մեթոդը անցած թեմայի տրամաբանական շարունակությունն է, նրա վերջնական գործնական լրացումը: Այս մեթոդի կիրառությունը ձևավորում է ինքնավստահություն ուսանողների մեջ, և եթե թեման ու հարցերը մանրակրկիտ ընտրված են, ապա պասսիվ ուսանողները նույնպես ընդգրկվում են քննարկման մեջ: Այն ստեղծում է անմիջական փնտրտուքի միջավայր և օգնում՝ սկսելու քննարկում ընտրված թեմայի շուրջ բացահայտելով հնարավոր կարծիքները: Քննարկման արդյունքում ստեղծվում է ընկերական միջավայր ուսանողների շրջանում, որը խթանում է քննարկման արդյունավետությունը և օգնում ուսանողներին՝ էականորեն զարգացնելու ստեղծագործական և վերլուծական հմտությունները:

Այսպիով, մեթոդի կիրառման շնորհիվ ուսանողները սովորում են ապացուցել իրենց տեսակետները, ինչպես նաև զարգացնել արդյունավետորեն փոխազդելու կարողությունը: Ըստ ուսանողների շրջանում իրականացված հարցումների, այս մեթոդով ուսուցումն առաջացնում է բուռն հետաքրքրություն քննարկվող հարցերի վերաբերյալ:

«Կվադրո» մեթոդն օգնում է վերջնականապես ամրապնդել անցած նյութը, որն էլ հանդիսանում է գիտելիքի ստացման ամենաարդյունավետ փուլը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Инновационный менеджмент социально-педагогического процесса: Учебное пособие / Под ред. **Н.В. Соловoвой, О.Ю. Калмыковой, Г.П. Гагаринской, В.П. Гарькина.** – Самара, 2010. – 253 с.
2. Emmerson P. The Whole of Business in One Book: Advanced. – Oxford, 2011. – 128 p.

3. **Кларин М.В.** Инновации в мировой педагогике: обучение на основе исследования, игры и дискуссии (Анализ зарыбежного опыта). - Рига: НПЦ «Эксперимент», 1995. – 176 с.
4. **Грузинов В.П., Грибов В.Д.** Экономока предприятия:Учебник, практикум, 2005.-336с.

А.В. ОГАНЕСЯН, А.М. КАРАКЕШИШЯН

МЕТОД “КВАДРО” В ГРУППОВОМ ОБУЧЕНИИ ДЕЛОВОМУ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Цель интерактивного метода - развить коммуникативные навыки студентов, систематизировать и обобщить знания обучаемого предмета. В основе метода "Квадро" лежит анализ пройденной темы путем дискуссий, что помогает окончательно закрепить пройденный материал.

Ключевые слова: интерактивный метод, определение дискуссионной темы, выявление мнения, цель общения, закрепление пройденного материала.

H.V. HOVHANNISYAN, A.M. GHARAKESHISHYAN

THE METHOD "QUADRO" IN GROUP TEACHING OF BUSINESS ENGLISH

The goal of the interactive method is to develop communication skills, systematize and generalize the knowledge of the subject taught.

The method of "Quadro" is bazed on the analysis of the studied theme by discussions, which helps reinforce the studied material.

Keywords: interactive method theme discussion definition, opinion revelation, communication, strengthening of the studied material.